European Commission against Racism and Intolerance
Commission européenne contre le racisme et l'intolérance

CRI(96)43

Version arménienne
Armenian version

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով

ECRI-ի ընդհանուր քաղաքական n 1 հանձնարարական

Պայքարը ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ

Ընդունվել է 1996 թ. հոկտեմբերի 4-ին

COUNCIL OF EUROPE CONSEIL DE L'EUROPE

Secretariat of ECRI
Directorate General of Human Rights and Legal Affairs
Council of Europe
F - 67075 STRASBOURG Cedex
Tel.: +33 (0) 3 88 41 29 64
Fax: +33 (0) 3 88 41 39 87
E-mail: combat.racism@coe.int

Այցելեք ձեր վեբ սայթը . www.ecri.coe.int

Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողովը

Անդրադառնալով Եվրոպայի խորհրդի անդամ պետությունների 1993 թ. հոկտեմբերի 8-ից 9-ը Վիեննայում տեղի ունեցած գագաթնաժողովում պետությունների և կառավարությունների ղեկավարների ընդունած Հռչակագրին,

Հիշեցնելով, որ այդ Հռչակագրի շրջանակներում սահմանված ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի գործողությունների ծրագիրը կոչ է անում Նախարարների կոմիտեին ստեղծել Ռասիզմի և անհանդուրժողականության դեմ եվրոպական հանձնաժողով, որը լիազորված լինի մասնավորապես անդամ պետություններին ուղղված ընդհանուր քաղաքական բնույթի հանձնարարականներ մշակել,

Հաշվի առնելով Եվրոպայի խորհրդի խորհրդարանական վեհաժողովի 1995 թ. հունիսի 28-ի՝ ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտակիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարի N 1275 հանձնարարականի առաջարկությունները,

Համոզված, որ ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ արդյունավետ պայքարը պահանջում է միջոցառումների լայն շարքով ուղեկցված համապարփակ և անդուլ մոտեցում, որոնք ընդգրկելով կյանքի բոլոր ոլորտները՝ միմյանց լրացնեն և ուժ հաղորդեն,

Ընդունելով անդամ պետությունների սոցիալական, տնտեսական և իրավական բազմազանությունը, ինչպես նաև գիտակցելով այդ բնագավառում բազմազանությունն արտացոլող յուրահատուկ քայլերի անհրաժեշտությունը,

Գիտակցելով, որ միայն իրավական քայլերը բավարար չեն ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարելու համար, որ դրանք այնուամենայնիվ առաջնահերթ կարևորություն ունեն և որ գոյություն ունեցող համապատասխան օրենքների չկիրառումը վարկաբեկում է ռասիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարին ուղղված բոլոր քայլերը,

Հիշեցնելով, որ հիմնականում կրթական բնույթի միջնաժամկետ և երկարաժամկետ կանխարգելիչ գործողություններն էապես կարևոր են ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության տարբեր դրսևորումներին վերջ դնելու համար, և այդ առումով իր աջակցությունն արտահայտելով Եվրոպայի խորհրդում հանդես բերվող տարբեր նախաձեռնություններին, մասնավորապես պատմության դասավանդման ոլորտում, ինչպես նաև հատկապես միգրացիայի պայմաններում միջմշակութային փոխըմբռնմանն ուղղված դասավանդման համար ուսուցիչների պատրաստմանը վերաբերող (84) 18 հանձնարարականին և դպրոցներում մարդու իրավունքների դասավանդմանն ու ուսուցմանը վերաբերող (R (85) 7 հանձնարարականին,

Ընդունելով, որ լրատվամիջոցները կարող են գործուն դեր խաղալ ի նպաստ հանդուրժողականության և փոխըմբռնման մշակույթի,

Ցանկանալով միջազգային ասպարեզում ձեռնարկված այլ միջոցառումները լրացնող ընդհանուր քաղաքական այս առաջին հանձնարարականով օգնել անդամ

պետություններին՝ արդյունավետ պայքար մղելու ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ,

նրանց որոշակի սահմանափակ բնագավառներում կոնկրետ և առանձնահատուկ քայլեր առաջարկելով,

անդամ պետությունների կառավարություններին առաջարկում է.

Ա. ԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ԲՆԱԳԱՎԱՌՈՒՄ ՕՐԵՆՔՆԵՐԻ ԵՎ ԴԱՏԱԿԱՆ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

. Հասնել նրան, որ պետությունն իր ներպետական իրավակարգի բարձր մակարդակով, օրինակ՝ Սահմանադրությամբ կամ Հիմնական օրենքով, պարտավորվի բոլոր անձանց նկատմամբ հավասար վերաբերմունք ապահովել և պայքարել ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ,

. Ստորագրել և վավերացնել հավելվածում ընդգրկված համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերը,

. Ձեռք առնել անհրաժեշտ միջոցներ, որպեսզի ազգային քրեական, քաղաքացիական և վարչական իրավունքով հստակ և հատուկ կերպով պայքար մղվի ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ, նախատեսելով մասնավորապես.

  . որ աշխատանքի տեղավորման և բնակչությանը նյութական բարիքներ և ծառայություններ մատուցելու բնագավառում խտրականությունն անօրինական է,

  . որ ռասիստական և օտարատյաց բնույթի գործողությունները խստորեն պատժվում են, օրինակ.

    . ռասիստական և օտարատյաց բնույթի սովորական քաղաքացիական իրավախախտումները սահմանելով որպես առանձնահատուկ իրավախախտումներ,

    . հստակ հաշվի առնելով իրավախախտման հեղինակի ռասիստական և օտարատյաց բնույթի դրդապատճառները,

  . որ ռասիստական և օտարատյաց բնույթի քրեական իրավախախտումներն աներկբայորեն պատասխանատվության են ենթարկվում,

  . որ համաձայն պետությունների՝ համապատասխան միջազգային իրավական փաստաթղթերով ստանձնած պարտավորությունների, մասնավորապես ըստ Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայի 10-րդ և 11-րդ հոդվածների,

  . բանավոր, գրավոր, լսատեսական և այլ միջոցները, այդ թվում նաև էլեկտրոնային լրատվամիջոցներով անցնող այն հաղորդագրությունները, որոնք ատելություն, խտրականություն կամ բռնություն են սերմանում ռասսայական, էթնիկական, ազգային կամ կրոնական խմբերի կամ նրանց անդամների նկատմամբ՝ տվյալ խմբին

նրանց պատկանելու պատճառով, իրավաբանորեն համարվում են քրեական իրավախախտում, որը վերաբերում է նաև նշված նյութերի արտադրությանը, տարածմանը և տարածման նպատակով պահպանմանը,

. Վերոհիշյալ միջազգային պարտավորությունների համաձայն միջոցներ ձեռնարկել, այդ թվում նաև անհրաժեշտության դեպքում՝ իրավական բնույթի, պայքարելու ռասիստական կազմակերպությունների դեմ, գիտակցելով, որ վերջիններս կարող են վտանգ ներկայացնել փոքրամասնական խմբերի մարդու իրավունքների նկատմամբ, ընդհուպ մինչև այդ կազմակերպությունների արգելումը, եթե համարվում է, որ դա նպաստում է ռասիզմի դեմ պայքարին,

. Լայն հասարակայնությանը ծանոթացնել ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարին ուղղված օրենսդրությանը,

. Առաջնահերթ կարևորություն տալ ռասիստական կամ օտարատյաց բնույթի իրավախախտումների քրեական հետապնդմանը, այն վարելով վճռական և հետևողական կերպով,

. Հավաքել և հրապարակել վիճակագրական ճշգրիտ տվյալներ՝ ոստիկանությանը հայտնի դարձած ռասիստական կամ օտարատյաց բնույթի իրավախախտումների թվի, դրանց դեմ ձեռնարկված քրեական հետապնդումների թվի, հետապնդումները դադարեցնելու պատճառների, ինչպես նաև դրանց արդյունքների վերաբերյալ,

. Խտրականության զոհ դարձած անձանց տրամադրել օրենքով նախատեսված համապատասխան պաշտպանություն՝ կամ քրեական իրավունքի, կամ քաղաքացիական և վարչական իրավունքի գծով, որոնց միջոցով կարող են նախատեսվել դրամական կամ այլ բնույթի փոխհատուցումներ,

. Խտրականության զոհ դարձած անձանց տրամադրել համապատասխան դատական օգնություն այն դեպքում, երբ վերջիններս ցանկանում են օգտվել օրենքով նախատեսված պաշտպանությունից,

. Բացատրել նրանց օրենքով նախատեսված պաշտպանության միջոցները և դրանցից օգտվելու ձևերը :

Բ. ՄԻ ՇԱՐՔ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

. Ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության դեմ պայքարն ամրապնդելու նպատակով համապատասխան միջոցներ ձեռք առնել կրթության և տեղեկատվության ոլորտներում,

. Համապատասխան քաղաքականության միջոցով հանրության ուշադրությունը հրավիրել մշակութային բազմազանության՝ հասարակությունը հարստացնող դերի վրա,

. Ուսումնասիրություններ կատարել՝ վեր հանելու համար ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության

էությունը, պատճառները և դրսևորումները տեղական, ռեգիոնալ և համապետական մակարդակներում,

. Հետևել, որպեսզի դպրոցական ծրագրերը, օրինակ՝ պատմության դասավանդման բնագավառում, այնպես կազմվեն, որպեսզի նպաստեն մշակութային բազմազանության նկատմամբ դրական վերաբերմունք ձևավորելուն,

. Աշխատանքի տեղավորման և մասնագիտական առաջխաղացման ոլորտների պատասխանատուների, բնակչության հետ անմիջական կապ ունեցող անձանց, ինչպես նաև այն ղեկավարների համար, որոնք պետք է հսկեն, որպեսզի որևէ հաստատության ներսում պահպանվեն խտրականության բացակայության և հավասար պայմաններ ապահովող նորմերը, կազմակերպել և աջակցել այնպիսի ուսումնական դասընթացներին, որոնք խթանում են մշակութային հանդուրժողականությունը, ուշադրություն են հրավիրում տարբեր նախապաշարմունքների վրա և ծանոթացնում խտրականության իրավական ասպեկտներին,

. Հետևել մասնավորապես, որպեսզի նման ուսուցում մշտապես իրականացվի ոստիկանության, քրեական արդարադատության ատյանների աշխատողների, ազատազրկման վայրերի աշխատողների և այն աշխատողների համար, որոնք գործ ունեն երկրի քաղաքացի չհանդիսացող անձանց, մասնավորապես՝ փախստականների և ապաստան հայցողների հետ,

. Կոչ անել պետական պաշտոնատար անձանց՝ իրենց հրապարակային հայտարարություններում ըմբռնել հանդուրժողականության քարոզչության անհրաժեշտությունը,

. Հետևել, որպեսզի ոստիկանությունը հավասար վերաբերմունք դրսևորի հասարակության բոլոր անդամների նկատմամբ և ձեռնպահ մնա ռասիստական, օտարատյաց, հակասեմիտական և անհանդուրժողական ցանկացած գործողությունից,

. Ստեղծել ոստիկանության և զանազան փոքրամասնական խմբերի միջև երկխոսության պաշտոնական և ոչ պաշտոնական կառույցներ, ինչպես նաև համապատասխան մեխանիզմներ, որոնք թույլ կտան անկախ հետաքննություն կատարել ոստիկանության և փոքրամասնական խմբերի միջև ծագած միջադեպերի և բախման ոլորտների վերաբերյալ,

. Քաջալերել փոքրամասնական խմբերի անդամներին բոլոր մակարդակների պետական ծառայության ոլորտում, մասնավորապես ոստիկանությունում և նրա օժանդակ կառույցներում աշխատանքի տեղավորումը,

. Հետևել, որպեսզի այնպիսի հանրային ծառայություններ, ինչպիսիք են առողջապահությունը, սոցիալական օգնությունը կամ կրթությունը հասանելի լինեն բոլորին առանց խտրականության,

. Հատուկ միջոցներ ձեռք առնել, ինչպես օրինակ՝ անհրաժեշտ տեղեկատվության տարածում, որպեսզի այս ծառայություններից օգտվելու իրավունք ունեցող խմբերի համար դրանք հավասար չափով հասանելի լինեն,

- Իրական հավասար պայմաններ ապահովել՝ ուսուցման յուրահատուկ միջոցառումներով դյուրացնելով փոքրամասնական խմբերի մուտքն աշխատանքի շուկա,
- Ուսումնասիրություններ կատարել՝ պետական և մասնավոր բնակֆոնդի բաշխման ոլորտում խտրականության և արգելքների գործելառճերը վեր հանելու համար,
- Այնպես անել, որպեսզի պետական բնակֆոնդը բաշխվի հրապարակված և հիմնավորման ենթակա չափորոշիչների հիման վրա, այլ կերպ ասած՝ դրանից օգտվելու իրավունք ունեցող բոլոր անձանց համար, անկախ նրանց ազգային պատկանելության, երաշխավորելով հավասար պայմաններ,
- Հաշվի առնելով, որ վերոհիշյալ բնագավառներում միջոցառումների ծրագրումն ու արդյունավետ իրականացումը հեշտ չեն առանց հիմնավոր տվյալների առկայության, տվյալների և անձնական կյանքի պաշտպանության եվրոպական օրենքներին, նորմատիվ ակտերին և հանձնարարականներին համապատասխան անհրաժեշտության դեպքում հավաքել այն տվյալները, որոնք թույլ կտան գնահատել բնակչության առավել խոցելի խմբերի վիճակը և փորձառությունը ռասիզմի, օտարատյացության, հակասեմիտիզմի և անհանդուրժողականության ոլորտներում :

ՀԱՎԵԼՎԱԾ

համապատասխան միջազգային փաստաթղթերի ցանկ

- Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության կոնվենցիա (Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիա) (1950 թ.) և նրա լրացուցիչ արձանագրությունները
- Փախստականների կարգավիճակի վերաբերյալ Միացյալ ազգերի կազմակերպության կոնվենցիա (1951թ.)
- Աշխատանքի տեղավորման և մասնագիտության բնագավառում խտրականության մասին Աշխատանքի միջազգային կազմակերպության կոնվենցիա (1958 թ.)
- Եվրոպական սոցիալական խարտիա և նրա լրացուցիչ արձանագրությունները
- Կրթության ոլորտում խտրականության դեմ պայքարի մասին ՅՈՒՆԵՍԿՕ-ի կոնվենցիա(1960 թ.)
- Բոլոր տիպի ռասսայական խտրականության ձևերի վերացման մասին միջազգային կոնվենցիա (1965 թ.)
- Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիր (1966 թ.)
- Քաղաքացիական և քաղաքական իրավունքների վերաբերյալ միջազգային դաշնագիր (1966 թ.) և նրա առաջին լրացուցիչ արձանագրությունը
- Տարածաշրջանային և փոքրամասնությունների լեզուների եվրոպական խարտիա (1992 թ.)
- Ազգային փոքրամասնությունների պաշտպանության շրջանակային կոնվենցիա (1995 թ.)